


— Իզմիրի Առաջնորդ Դուրեան Տ. Եղիշէ եպիսկոպոսի պաշտօնն հաստատող Պէրաթը Պատրիարքարանի յանձնուեցաւ: Հաճընէ 25 և Պիլանէ 15 տուն Հայ Հռոմէականք՝ Տ. Սահակ Ս. Կաթուղիկոսէ խնդրեր են՝ զերենք Հայ եկեղեցւոյ մէջ ընդունել:



ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԸՑ ԵԿԵՂԵՑԻ

Արարատի նախընթաց համարներում մենք առաջ էինք բերել, թէ Ռուսաստանում ինչ կերպ ցանկացան անմահացնել պատերազմի դաշտում ընկածների անունները. (տես Արարատ № 5 1904 թ.): Այժմ Տրանկվիլեցիլի քահանան Սիմէրոսի թեմական համըստեքի էջերում առաջարկում է ընկած զինուորների վերաբերութեամբ հետեւեալ կերպով վճարել հովուական պարտքը. — բացի ընդհանուր աղօթքներից՝ նա խորհուրդ է տալիս մասնակի յիշատակութիւններ և մաղթանքներ կատարել նրանց համար ամեն անգամ պատարագից յետոյ և եթէ ծխականների միջից էլ եղել են պատերազմի դաշտում մեռնողներ, այդ գէպերում հանգիստւոր կերպով կարգաւ նրանց անունները:

Մի այլ քահանան առանձին նամակով գիմել է նովգորոդի թեմական տեղեկաբերին այդ թեմի զինուորներին գէնքի կոչելու պատճառով և ռուսական հողի համար արիւն թափողների զործին հովուական մասնակցութիւնն աւելի ընդարձակ չափերով է հասկանում: Նա մեռածների համար այնքան չի մտածում, որքան կենդանի մնացողների համար: Նա նախ յիշում է և բարեմաղթութիւններ անում այն բոլոր ծխականների համար, որոնք զործող զօրքի շարքերումն են գտնւում և բարձր ձայնով կանչում է նրանց անունները կենդանեաց համար աղօթելիս ի մխիթարութիւն նրանց ծնողների, կանանց և երեխաների, և երկրորդ հնարաւորութեան չափով յաճախ է այցելում թամանակաւորապէս կամ զուգէ հէնց յաւիտեան որբացած աները:

Երրորդ. — միջոցների է գիմում նիւթական օժանդակու-

թիւն հասցնելու աշխատաւոր ձեռքերից զոհուած ընտանիքներին: Նա յոյս ունի, որ կրկարողանայ համայնքի կողմից ևս օժանդակել նրանց, և յարմար առիթ ներկայացած միջոցին առանց որ և է հիւրասիրութեան՝ կաշխատեն իրենց համագիւղացի զինուորներին հոգերի մշակութեան համար: Բացի սրանից նա առաջարկում է մաս հանել եկեղեցական—ծխական հոգաբարձութեան միջոցներից և վերջապէս անձամբ խնդրել աւելի միջոցի տէր ծխականներից հաց, խոտ դրամ և այլ կարևոր բաներ նոյն որբացած ընտանիքների համար: Քահանան իւր նամակը վերջացնում է հետևեալ խօսքերով.—

Վերոյիշեալները գրում եմ միմիայն այն նպատակաւ, որ գուցէ իմ ուրիշ եղբայրակիցներս արձագանք կըտան այս խնդրին և նորանոր միջոցներ կըգտնեն վաստակած և ծանրաբեռնուածներին վիճակը թեթեւացնելու:

«Гражданинъ» թերթի էջերում Սմիլեագին քահանան ապացուցանում է տօնական օրերի աշխատանքի վերաբերեալ օրէնքի խմբագրութեան փոփոխութեան անհրաժեշտութիւնը: Յայտնի է, որ այդ օրէնքով կիւրակէ, տօն և հանդիսաւոր օրերին աշխատելու իրաւունքը թողնուած է իւրաքանչիւրի կամաց և ոչ մի իշխանութիւն իրաւունք չունի արգելք դնելու, որովհետեւ Պետական Խորհրդի կարծիքով, տօն օրերին աշխատողը ոչ եկեղեցու դէմ է մեղանշում և ոչ էլ օրէնքի:»

Օրէնքի այդպիսի ձևակերպութիւնն այն հետեանք է ունեցել, որ գրամատէրեր աշխատանքի «կամաւորութեան» դիմակի տակ սկսել են շահագործել բանւորների տօնական աշխատանքն իրենց օգտին: Հարաւային Ռուսաստանի մամուլն արձանագրեց արգէն բազմաթիւ դէպքեր, թէ ինչպէս դադարեալ գերմանացիք սկսան օգուտ քաղել նոր օրէնքից: Իրենց տնտեսական գործերի համար այժմս նրանք վարձում են միմիայն այն բանւորներին, որոնք ինքնաթափար կերպով ցանկութիւն են յայտնում աշխատել նաեւ կիւրակէ և տօն օրերին, իսկ ով որ այդ ցանկութիւնը չունի, նրան բոլորովին չեն ընդունում: Նայն բանն են անում և մեր կապալաւորները, արհեստանոցների և արդիւնաբերական հաստատութիւնների տէրերը: Կոտ ժամանակներս ես նորոգում էի ընակարանս, մինչև օրէնքի հրատարակութիւնը կիւրակէ և տօն օրերին ոչ ոք չէր աշխատում, բայց հէնց որ օրէնքը լոյս տեսաւ, կապալաւորն իսկոյն նկատեց իւր վարպետներին և բանւորներին մէջ «ինքնաթափար ցանկութիւն» աշխատելու բոլոր տօն օրերին և ի հարկէ

չրմամարմախուեց հախառակել նրանց այդպիսի ցանկութեան:

Օրէնքի համար ամենակարեւորը այնպիսի խմբագրութիւնն է, որը թիւր մեկնութեան և օրէնքը զանց առնելու հնարաւորութիւն և ելք չի թողնում: Եթէ օրէնքի հրատարակութեան ժամանակ այդ պայմանը պահպանուած չէ, ապա ուրեմն շատ բնական է ցանկալ, որ այդ պակասութիւնը վերացուի: Շնորհիւ համար ամուսիններից բաժանուած անձանց նորէն ամուսնանալու օրէնքը նոյնպէս չի վաշխում առանձին ճշգրտութեամբ. նոյն իսկ այն տեսակէտից, որ ոչինչ չի ասում օրէնքի հրատարակութիւնից առաջ ամուսնալուծուածների մասին: Նոյնպիսի պակասութիւններն ունի նաև արտաքոյ ամուսնութեան ծնուած մանուկների վերաբերեալ օրէնքը: Իսկ եթէ ուշադրութեամբ կարդալու լինինք օրինաց XIV հատորը, (Уставъ о предупрежденіи и пресѣченіи преступленій) այնտեղ մենք կը գտնենք բազմաթիւ մութ, թերի և երկդիմի յօդուածներ: Օրինակի համար առաջ կրբերենք հետեւեալ յօդուածներ. — յօդուած 28. «Սրգելւում է Գրխատի ծննդեան երեկոյն և ծննդեան ամբողջ շաբաթուայ ընթացքում կռապաշտական գանազան աւանդութիւնների համաձայն զարդարուել մեհենական շորերով, փողոցներում պարեր սարքել և գայթակղեցնող այլ և այլ երգեր երգել»: Բառացի մտքով դուրս է գալիս, որ այդ տեսակ պարերն ու երգեցողութիւնը միմիայն ծննդեան շաբաթուայ ընթացքումն է արգելւում: Յօդուած 29-րդ. «Ձատկական շաբաթուայ ընթացքում արգելւում է հին նախապաշարուած վատ սովորութիւնների համաձայն ջուր լցնել առաւօտեան ժամերգութեան չեկոյնների վրայ»: Դուրս է գալիս, որ զատկական շաբաթից դատ ուրիշ օրերին թոյլ է տրուած լողացնել և ջուր լցնել առաւօտեան ժամերգութեան միջոցին ներկայ չեղողներին վրայ:

Յօդուած 31. «Ընտանեկան ներկայացումների ժամանակ արգելւում է հագնել վանական կամ հոգևորականների շորերը և շրջել այդ կամ ուրիշ անպատշաճ զգեստներով»: Ընթերցողն այնպիսի տալաւորութիւն է ստանում, որ օրէնսդիրը վանական և առհասարակ հոգևորականների շորերն էլ անպատշաճ զգեստների շարքն է դասում: Չընտելով վերոյիշեալ և այլ մի բանի օրէնքների անգրջհեղեղեան լինելու մասին, հէնց նրանց խմբագրութիւնն ինքն ըստ ինքեան չափազանց անյաջող է: Եթէ հնար չկայ օրէնսգրութիւնից դուրս ձգելու իրենց դարն անցուցած դրուածները, գոնէ ցանկալի է, որ նրանք գոհացուցիչ կերպով ձեւակերպուած և խմբագրուած լինին:

«Церк. Вѣстникъ» թերթն հաղորդում է, որ Սերբիայի պրավոսլաւ եկեղեցու ներքին հանգիստը խանգարուած է նազովրեցիների միսսիական աղանդով, որը մուտք է գործել Աւստրիայից: Այդ աղանդի էութիւնն արդէն պարզուած է և Սերբիայի միտրօպօլիտ Իննովիէնտիոսը յայանի մաքառումն է սկսել այդ աղանդի դէմ: Ի միջի այլոց Սերբիայի առաջնապետական գաղութներում դիտութեանց շարքում ընդունուած է այդ աղանդի պատմութեան և նրա դէմ մաքառելու միջոցների ուսումնասիրութիւնը:

Նոյն թերթի № 36 ում գրուած է հետևեալը. — Մեր հոգևորականութեան մի մասը իւր եկեղեցական-ձխական պաշտօնավարութեան մէջ, ցաւելով պէտք է ասենք, որ ոչ թէ միայն հեռու է հովուութեան իրենցից, այլ և միջակ՝ իւր պարտականութիւնը բարեխիղճ կերպով կատարող հովուի տիպարից: Հոգևորականութեան մասին սովորական բողոքները՝ նրանց ազահութեան, անփոյթ լինելու, ազիտութեան, ձխականների հետ կուպիտ վարուելու և եկեղ խորհուրդներն ու ձէտերն անհոգութեամբ կատարելու մասին՝ տարաբաղդաբար յաճախ շատ հիմնաւոր են լինում: Կարծում ենք սակայն, որ այդպիսի դէպքերը մասնակի տիտը բացառութիւններ են: Այդպիսի եզրակացութեան են հասցնում դիտած և հակառակ բաղմամբիւրդէպքերը, որոնց մի մասը վերջերս լոյս տեսաւ մամուլի մէջ: Վօլինի թեմական տեղեկաբերի օգոստոսի համարում տպուած էր գիւղերից մինի խնդիրը, որտեղից քահանային փոխադրել էին ժխտմիւր, որով խնդրում էին վերադարձնել նրանց յարգուած, աշխատուր եւ իրենց նամարիս հօրը՝ իրենց հովուին: Նոյն թերթում յիշուած է նաև մի այլ գիւղական քահանայի անունը, որը կարողացել է արմատախիլ անել իւր ձխականների միջից կաթոլիկաց եկեղեցին այցելելու սովորութիւնը՝ մանաւանդ Պադուայի ս. Անտօնիոսի տօնի օրը՝ յունիսի 13 ին: Այդ նպատակով նա համոզել է իւր ձխականներին բերել տալ Պօլանի ս. Առաքաւածաճնայ պատկերի պատճէնը և պատկերի ընդունելութեան հանդէսը կատարելով յունիսի 13 ին, աշխատել է հաստատել նոյն օրը պրավոսլաւ քրիստոնէական տօնը: Քահանան այդպիսով հասել է նպատակին և նոյն իսկ տեղական կաթոլիկներին դրաւել է պրավոսլաւ հանդիսին մասնակցելու:

— Տէր Առաքաւած, որքան են փոխուել քրիստոնէայ հոգևորականի և հովուի վերաբերեալ պահանջները և որքան փոքր և շատ անգամ հասարակ բան է հարկաւոր նրանց ղոհացուցիչ և

խօհական հովիւ ընդունելու համար: Գիւղական համայնքի խըն-
դիրը ժիտօմիբ փոխադրուած քահանայի մասին բացի ընդ-
հանուր բառերից ոչինչ չը պարունակելով իւր մէջ նրա
դործերի և արժանաւորութեան մասին, կարող է կաղմուած
լինել նրա այս կամ այն բարեկամների, կամ նորան յա-
ջորդող քահանայից դժգոհ եղածների ձեռքով, իսկ թէ ինչ
աստիճանի գովասանքներ են շուայլում այդպիսի դէպքերում
նոյն իսկ ամենասանարժանների հասցէին, տարաբաղդաբար մեր
եկեղեցական կեանքում անթիւ ապացոյցներ ունինք. իսկ եր-
կու քրիստոնեայ համայնքների սրբութեանց փոխադարձ ուխ-
տադնացութեան դէմ մաքառումը՝ բացի հակաքրիստոնէական
լինելուց, անջրպետ է բաց անում դրացի ժողովրդներին մէջ և
փոխանակ սիրոյ ու եղբայրութեան, միմիայն վնասակար խոր-
թութիւն է առաջացնում: Եւ ցաւալի է, որ այդպիսի մի դործ
համարւում է միանգամայն բաւական հոգեւորականի արժանիքը
չափելու:

«Русь» թերթի № 265 Փ. քահանան գրում է.

Նորերս Церковный Вѣстник թերթում գրուեցին մի շարք
յօդուածներ հոգեւորականների զգեստների անյարմարութեան
և աշխարհականների սովորական զգեստներով փոխարինելու
ցանկալիութեան մասին: Ներկայ նամակովս ես կաշխատեմ ու-
շադրութիւն հրաւիրել այդ խնդրի այն կողմերի վրայ, որոնք
ջօշափուած չէին յիշեալ յօդուածներում:

Մեր զգեստի առաջին անյարմարութիւնը նրանումն է, որ
նա շատ աւելի թանկ է՝ քան աշխարհական զգեստը, բացի
դրանից նա երկու անգամ աւելի շուտ է մաշւում քան աշ-
խարհական շորերը: Լայն և երկար լինելով՝ նա շատ շուտ է
դժւում, կեղտոտւում թողից ու ցեխից, եղտուում է թէ եր-
կար մազերից և թէ նրանից, որ կաբան ու փարաջան պարա-
նոցի մօտ անմիջապէս շփւում են մերկ մարմնի հետ, որովհետեւ
օսլայած թւնոց ու վիշոցներ կրելը մեզ նոյնպէս արգելուած
է: Նրանց կրողներին մէջ տեսնում են ձգտումն ոչ թէ դէպի
մաքրասիրութիւն, այլ պծնուելու արտոնադրութիւն:

Ահա այս պատճառով չափաւոր և շատ անգամ աղքա-
տիկ եկամուտների տէր գիւղական քահանան անկարող է վա-
յելուչ ու մաքուր պահպանել իւր արտաքինը: Գուք յաճախ
հանդիպում էք անփոյթ հագնուած գիւղական քահանայի, որ
շատ անհաճոյ տպաւորութիւն է թողնում:

Անփոյթութիւնը բարոյական անկման նշաններից մէկն է:
Ինձ յաճախ պատահել է դիտել, թէ հետզհետէ ինչպէս էր ընկ-

Նույն երևտասարդ քահանան, որն իւր պաշտօնավարութիւնը սկսել էր ամենալաւ ձգտումներով: Եւ նրա անկումն սովորաբար սկսում էր արտաքինից: Չանձրացանք երկար մաղերով զբաղուելուց (նրանց կարգին պահպանելու համար հարկաւոր է մեծ համբերութիւն ե երկար ժամանակ): ձանձրացանք միշտ փեշեր հաւաքելուց եւ մեր զգեստների մաքրութեան ու վայելչութեան վրայ հսկելուց: Եւ ահա դորանից յետոյ սկսում է արտաքինին անուշադիր վերաբերուիլը: Մազերը գլուխում են, փարաջան ու կաքան լի են լաքաներով, ծածկուած են թոզով և այլն. պէտք է լինում անընդհատ մաքառել այն անյարմարութեանց դէմ, որոնք առաջ են դալիս հոգեորական հանդերձներ կրելու: Հարկաւոր է գնալ ծխականների մօտ, խօսել այս կամ այն գործի մասին, եկեղեցուն վերաբերեալ դանազան կարեքներին մասին զրուցել, ընթերցանութիւն սարքել, դպրոց մտնել և այլն. գործեր, որոնք պահանջում են արագ շարժումն, իսկ եկեղեցին կամ դպրոցը դառնում են բաւական հեռու և երկար ծանր շորերով այդ տարածութիւնն անցնելու համար՝ մանաւանդ ձմեռը և անձրևին ու ցեխին, ահագին ճիգ է պահանջում՝ մանաւանդ եթէ ի նկատի առնենք այն հանգամանքը, որ դուք մի ամբողջ վերստից աւելի տարածութեան վրայ յուղարկաւորել էք ննջեցեալին և ձեր թրջուած և թրե տուած պաշմո՛նացիները դեռ չորացնել և մաքրել պէտք է: Եւ այդպիսով գործը յետաձգւում է այսօր, վաղը և այլն. և վերջ ի վերջոյ հասնում էք այն առակի, որ տսում է թէ «գործը գայլ հօշէ, որ փախչի»: Եւ ի վերջոյ այդպիսի հովուի ամբողջ գործունէութիւնը հասնում է ձեւական և անփոյթ կերպով կատարած ծէսերի

Անկասկած զգեստը որոշ ազդեցութիւն է ունենում ոչ միայն արտաքին ձևի, այլ և բարոյական մի քանի սովորութիւններ և տրամադրութիւններ ձեռք բերելու վրայ: Հոգեորականի համազգեստը կարծէք յատկապէս հնարուած է նրա համար, որ դանդաղ և ծանր, կոպիտ քայլուածք և ձևեր պատուաստի մարդուն. զրկի արագ և թեթեւ շարժուելու հնարաւորութիւնից, կապի ոտը ու ձեռքը և իւր ծանրութեամբ և երկարութեամբ ձգի մարդուն դէպի երկիր. մի խօսքով՝ որքան կարելի է մեծ դժուարութիւն և անախորժութիւն պատճառի այդ համազգեստ կրողներին:

Մեր լայն և ընդարձակ կաքաները, որոնցով սովորաբար շրջում ենք տանը, միանգամայն նման են աղաների առաւօտուայ այն խալաթներին, որոնցից նրանք տարններով դուրս չէին

դալիս և որոնք մեծ գլխութիւն են ներկայացնում ծուլութեան և քնէածութեան համար: Ահա այդ է պատճառը, որ հոգեւորականութեան թարմ, երիտասարդ և դեռ կեանքի մանրու մուներ բաներով չըտղմակալած մասը ամեն կերպ ձգտում է դէն ձգել իրենց այդ դարաւոր խալաթը, որպէս զի կարողանայ ազատ շարժուել և շրջել: Գուցէ այդպիսով մեզ յաջողուի դէն ձգել այն ծուլութիւնն ու թմրութիւնը, որոնք այդ խալաթի հետ իբրև ժառանգութիւն անցել են մեզ քնէած և անշարժ Արեւելքից: Ի՞նչ զարմանալի բան կայ, երբ շատ և շատ արժանաւոր անձինք փախուստ են տալիս քահանայական կոչումից, որպէս զի դիմներին չը քաշեն այն տձև և տգեղ հանդերձը, որն այժմս պարտադիր է հոգեւորականութեան համար: Մեզ կը պատասխանեն, որ այդպիսի մարդկանց չարժէ անգամ նշանակութիւն տալ, որովհետև նրանք հովուական բարձր պաշտօնին չեն կարողանում զոհել այնպիսի մանր-մուներ բաները, ինչպիսին է համազգեստ կրելու գործը: Միթէ մեծ օգուտ կը բերեն նրանք այնտեղ, ուր հարկաւոր է լինում համարեա անընդհատ և ծանր արիութիւն: Այդ բոլորն ի հարկէ ոչինչ է, եթէ գործի վրայ նայենք այն խիստ իդեալական պահանջների տեսակէտից, որպիսիք գրւում էն հովուի վրայ եկեղեցական կանոններով: Բայց տարաբաղդաբար ի նկատի պէտքէ առնել նաև կեանքի գործնական պահանջները, պէտքէ չը մոռանալ, որ մեզ յաճախ պակասում են ոչ միայն իդեալական հովիւներ, այլ և շատ և շատ անգամ միջակ տեսակի քահանաներ: Բացի այս բոլորից, չը պէտք է մոռանալ, որ մարդս այնպիսի արարած է, որ նրան աւելի դիւրին է լինում լուրջ զոհաբերութիւններ, քան ամենամանր բաներից և սովորութիւններից բաժանուիլը: Վանականի մէկը պատմում էր, որ վանք մանեկուց առաջ կշռելով իւր ոյժերը գալիք օրերի և արիութեան համար, լուրջ մտածմունքի մէջ էր ընկնում, թէ արդեօք կարող կլինի թողնել այնպիսի մի հասարակ սովորութիւն, ինչպէս ծխախոտ ծխելը:

Վախում են, թէ ինչպէս կը վերաբերուի հասարակ ժողովուրդը, եթէ հոգեւորականները փոխեն իրենց համազգեստը և մազերը կարճացնեն: Վարժեմ ժամանակ է փոխել մեր ժողովրդի մասին արմատաբաժ այն հին կարծիքը, որ նա իբրև թէ բացի արտաքինից՝ ոչինչ չի տեսնում: Այդ առոյգները մոռանում են ժողովրդի կազմած այն արածը՝ «որ շորով ընդունում են, իսկ խելքով ճանապարհ դնում»: Շահախնդիր, չար ու անսիրտ քահանային նա շուտ կը հասկանայ և կը դնահատի

արժանաւոր կերպով, թէպէտ նա արտաքուստ ամենաւայելուչ տեսք ունենայ, և ընդհակառակն՝ նա միշտ յարգանքով կը վերաբերուի զգայուն և գործունեայ քահանային։ Բացի դորանից բոլորովին չի նկատուում, որ ժողովուրդը առանձին յարգանք տածելիս լինի դէպի մեր ներկայ արտաքինը։

Այլապէս դոյութիւն չէին ունենալ մեր հասցէին ուղղուած բազմաթիւ մականուններ։ միթէ գիւղական քահանաներից շատերը հէնց այժմս էլ չեն կտրում իրենց մազերը և բաճկոն կամ կարճիկ չեն հագնում տանը ե գիւղական աշխատանքների ժամանակ։ Ռուսաստանի հիւսիսում, որտեղ կան բազմաթիւ ազանգաւորներ, որոնք աւելի պահանջող են դէպի արտաքին վայելչութիւնը, այնտեղ սլուսողաւներն էլ աւելի պահանջիտ և սիրող են արտաքին շուքի, քան ուրիշ տեղերում, յաճախ կը հանդիպէք դութանի ետեց քայլող քահանային գիւղական ամենասովորական շորերով և դրանով ոչ ոք չի գայթակղում։ Հանգերձ փոխելը միմիայն այժմս է մարտանենդութեան նման բան դարձել պատասխանատուութեան երկիւղի տակ։ Ընդհակառակն մեր ներկայ արտաքինն աւելի է ծաղրի և գայթակղութեան պատճառ դառնում, մեր չինացու նման հիւսած մազերը, աշնանային անձրևի ու ցեխի ժամանակ բարձր քաշած լայն փաւրջաններն ու կարանները և հոգեւորականի այլանդակութեան հասնող այդ արտաքինն է, որ ժողովրդին նկիթ է տալիս ծաղրի ու ամեն տեսակ սրախօսութիւններին։

Այժմս շատ է խօսուում աշխարհական և հոգեւորական դատակարգերի մերձեցման մասին, աշխատում են գտնել այնպիսի միջոցներ, որ այդ երկու դատակարգերն էլ միասին ծառայել կարողանան ժողովրդի լուսաւորութեան գործին։ Կասկած չկայ, որ այդ հեշտ իրադործելի կլինէր, եթէ երկու կողմից մի քանի զիջողութիւններ տեղի ունենային և հոգեւորականութեան համար չափազանց ցանկալի է, որ աշխարհական մարդիկ խորթ աչքով չընայէին հոգեւորականներին և նրանց առանձին, տարօրինակ և աշխարհի միւս մահկանացուներին անհատականաբար արարածներ չը համարէին։ Իսկ դրա համար պէտք է դէն ձգել դատակարգային՝ կառուայական բոլոր նախապաշարումներն ու կղզիացած զրութիւնը։ Հնութեան շարքն անցած նախապաշարումներից մինը՝ աւելւորդ և միանդամայն անկարեւոր բան է նաև նրանց համազգեստը։

Երկար մազերով շրջելը վաղուց աւանդութեան շարքն է անցած մեր հոգեւորականների համար։ Բաճկոն, կարճիկ և արխաւուխ հագնելը գիւղերում և աշխատանքի ժամանակ արդէն

մեղանում* շատ տարածուած է և ժողովուրդը երբէք դրա համար քահանային չի բամբասում, իսկ թէ ինչպէս կը վերաբերուի մեր միջին և բարձր դասակարգը այդպիսի փոփոխութեան, դժուար է ասել, որովհետեւ հոգևորականների համազգեստի մասին մամուլի մէջ լսուող ձայները նորեն և դեռ հասարակութեան ձայնն այդ մասին չի լսուած:

Նոյն խնդրի մասին «РҮСЬ» թերթի № 264 ում կարդում ենք.

— Մենք մի քանի նամակներ ստացանք հոգևորականներէ համազգեստի մասին, որոնցից առաջ ենք բերում ամենաբնորոշները: Տ. քահանան գրում է.—

Մեծ շնորհակալութիւն կը յայտնէր պրաւօսլաւ հոգևորականութիւնը աշխարհական մամուլին, եթէ վերջինս ի միջի այլ հրատապ խնդիրների՝ յաճախակի շօշափէր միմիայն սովորութեան շնորհիւ հոգևորականներին յատկացրած համազգեստի փոփոխութեան խնդիրը: Ժամանակակից փարիսեցիք ինչքան էլ պնդեն, որ քահանաների թւերի լայնութիւնն ու մազերի երկարութիւնը ուղիղ համեմատական են ժողովրդի դէպի նրանց տաժած յարգանքի հետ, իւրաքանչիւր բարեխիղճ հովիւը կասի, որ այդ այդպէս չէ: Եկեղեցու սպասաւորները փորձով գիտեն, որ լայն շորերով ու երկար մազերով ծածկել չեն կարող իրենց թուլութիւնները և եթէ ներքին լաւ յատկութիւններ չունիս, յարգանքի չես արժանանալ: Գիւղական կեանքում—բանջարանոցում, տան բակում, այգիներում և դաշտերում, և հէնց իրենց սենեակում քահանայք սովորաբար անց են կացնում կարճ շորերով, որոնց զանազան անուններ են տալիս և երբէք չեն քաշում իրենց ծխականներին այդ շորերով հանդիպելու և ընդունելու ժամանակ:

Նրանք քաշում են այդպէս երեւոյց, երբ այցելուն հասարակական աւելի բարձր դիրք ունի՝ քան նրա պարզ ծխականները: Սրանից պարզ հետևում է, որ «փարաջապաշտների» գայթակղութիւնից վախենալու բոլորովին տեղիք չկայ: Քահանան իւր ծխականների հետ յարաբերութեանց մէջ մտնելիս որքան աւելի պարզ է, որքան նա մօտ է նրանց նոյն իսկ իւր արտաքինով, այնքան աւելի մտաչելի է իւր խորհուրդներով, աշխատանքի օրինակով և բարի ու ազնիւ կեանքով: Աշխարհական հանգերձը ոչ թէ միայն չի ստորացնիլ քահանային իւր ծխականների աչքում, այլ ընդհակառակն՝ աւելի կը մօտեցնի իրար և հնարաւորութիւն կը տայ աւելի յաճախ տեսնուելու, սերտ յարաբերութիւն և հետևապէս բարոյական փոխադարձ աւելի մեծ ներգործութիւն ունենալու:

«Աշխարհական շորերով հոգևորականն ներկայութիւնը հասարակութեան մէջ կընդունուէր առանց որևէ անտեղի դարմանքի և բացականչութիւնների, ինչպէս այդ յաճախ տեղի ունի այժմս... Արդեօք այդ չէ՞ պատճառը, որ հոգևորականութիւնը ժողովրդի հետ ամենօրեայ յարաբերութեան մէջ լինելուց այժմս այդչափ խուսափում է»:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Ֆրանսիայում սկսուեց մի նոր անդամահատութիւն՝ կաթոլիկ եկեղեցու պետութիւնից բաժանուելը: Այդ անդամահատութիւնը սկսուեց մի մասի ուրախական աղաղակներով, մինչդեռ միւս մասը զայրագին բողոքում և յարձակում էր:

Բայց հասկանալու համար, թէ որ ատիճանի խորն է շօշափում այդ հարցը հասարակութեան բոլոր խաւերը ու ստեղծում երկու անհաշտ բանակներ, պէտք է ինկատի առնել դպրոցի, պատանեկութեան և կեանքի կազմակերպութեան վրայ ունեցած այն ահագին ազդեցութիւնը, որը ձեռք էր բերել կաթոլիկ հոգևորականութիւնը Ֆրանսիայի՝ «կաթոլիկ եկեղեցու այդ անդրանիկ դռներ վերայ»:

1902 թուին երբ իշխանութիւնն անցաւ ներկայ՝ պ. Կոմբի նախարարութեան ձեռքը, Ֆրանսիայում դոյութիւն ունէին 914 թոյլատրուած հոգևոր միաբանութիւններ, որոնցից 5-ն արական, իսկ 909 իգական, 457 միաբանութիւններ, որոնց հաստատման մատին արդէն բանակցութիւններ էին վարում — վերջիններիցս 61-ն — արական, 366-ն — իգական: Ընդ ամենը 1371 միաբանութիւն:

Հոգևոր միաբանութիւններին պատկանող զանազան հիմնարկութիւններին թիւն հասնում էր 20,823:

Այդ հիմնարկութիւնների մեծագոյն մասը — 16,904 ծառայում էին կրթական — դաստիարակչական նպատակներին, իսկ 319 հիմնարկութիւնները հիւանդանոց, ասպատանարան կամ զուտ կրօնական նպատակներին ծառայող հիմնարկութիւններ էին:

Առհասարակ բոլոր երկիրներում մեծ խնդիր է եղել, թէ ի՞նչ տեսակի դպրոցներն են աւելի նպատակայարմար. — ժողովրդական, թէ եկեղեցական — ծխական և որքան ազատ հայեայցք է մտել մի երկրի մէջ, որքան աւելի և — աւելի է մուտք գործել կրօնական ազատութիւնը, այնքան աշխարհական դպրոցների